Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/14>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.07.2017 թ.
ժ. 15:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Մ. Քյուրքչյանը,
Հանձնաժողովի անդամներ	Ա. Հախումյանը /գնահատող/,
	Ռ. Եղիազարյանը /գնահատող/,
	Ա. Գրիգորյանը /քացող/,
	Ա. Քոչարյանը /քացող/,
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1. Առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե արված հարցման պատասխանի ստացման մասին

(Մ. Քյուրքչյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

- <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/14>> ծածկագրով գնանշման հարցման առաջին տեղ զբաղեցնող մասնակիցը՝ <<Սարգիս և Մարիանա>> ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,
- Գնահատող հանձնաժողովի 10.07.2017 թ. 3.1 կետով նախատեսված հարցման պատասխանը ստացվել է սահմանված ժամկետում. համաձայն որի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ.
- ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի, երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
- Հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքին:

2. Հայտի /որոկավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի/ գնահատման արդյունքները

(Մ. Քյուրքչյան)

2.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի հայտի գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Սարգիս և Մարիանա>> ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/14>> ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Մ. Քյուրքչյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 ենթակետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/14>> ծածկագրով գնման գործընթացի ընտրված մասնակից հայտարարվել <<Սարգիս և Մարիանա>> ՍՊԸ-ին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Աշխատանքների կատարման պետական պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Քյուրքչյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը.

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վարչական շենքի վերնահարկի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պայմանագիր կնքել <<Սարգիս և Մարիանա>> ՍՊԸ -ի հետ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Մ. Քյուրքչյան

անդամ՝ Ա. Հախումյան

Ռ. Եղիազարյան

Ա. Գրիգորյան

Ա. Քոչարյան

Քարտուղար՝ Հ. Ավետիսյան